«ՍԱՍՆԱ ԾՌԵՐԻ» ԵՐԵՔ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ

Ս. Դ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մհեր, Հովան. Վերջո եղբայրները «Սասնա Ծռերի» այն կերպարներից են, որոնք էպոսում պարզ դրսևորում են իրենց տիեզերական էությունը։ Վաղուց է նկատված, որ նրանցից առաջինը՝ Մհերը, պահել է իր դիցաբանական նախատիպի՝ լույս-արևի աստված Միհրի անունն ու բնորոշ հատկանիշները[1]։ Հ. Օրբելին նրա մեջ տեսնում էր նաև նախնական որսորդին և նիզակակիր մարտիկին՝ կայծակն անձնավորող տիեզերական շանթառաք էակի էպոսային կրկնորդին։ Այս երկրորդ էությամբ Մհերը անքակտելի կապի մեջ է իր եղբայրների հետ, որոնք նույնպես պահել են իրենց դիցաբանական նախատիպ ամպրոպային էակների հատկանիշները։ Ըստ Հ. Օրբելու, Ձենով Հովանն իր դղրդացնող ու սասանող ձայնով հիշեցնում է որոտի անձնավորում երկնաբնակ դարբնին (վերջինիս նման մետեորային երկաթից սուր է կռում), իսկ Վերդոն վերհուշն է տիեզերական այն էակի, որն անձնավորում է կայծակի ու որոտի հետ սերտորեն կապված և նրանց հաջորդող անձրևային երևույթը (այստեղից էլ, ըստ Հ. Օրբելու, նրա հայտնի մականունը)[2]։

Մեր վիպական եռյակի դիցաբանական նախատիպերը ստեղծվել են խոր հնադարում, հնդեվրոպական ցեղերի համատեղ բնակության ժամանակաշրջանում։ Ըստ ֆրանսիացի գիտնական Ժորժ Դյումեզիլի, հին Իրանի և Հնդկաստանի հասարակության եռադաս բաժանման սկզբունքը դալիս էր հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանից, երբ հնդեվրոպացիներն ընդհանուր լեզվի հետ միասին ունեին իրենց հասարակության սոցիալական կառուցվածքին համապատասխանող ընդհանուր գաղափարախոսություն։ Միասնության ժամանակաշրջանի հասարակության եռադաս բաժանմանը (քրմեր, զինվորներ, հողագործներ կամ շարքային համայնականներ) համապատասխանում էր նրանով պայմանավորված աստվածների եռանդամ դասակարգումը։ Ընդ որում, ինչպես ապացուցում է նա, հնդեվրոպական ցեղերի դիցական եռյակներն օժտված էին ոչ միայն տիեզերական, այլև սոցիալական ֆունկցիաներով։ Նրանց առաջին անդամը դրսևորվում էր երկու բնությամբ՝ մոգական և իրավական, տնօրինելով քրմերի գործունեության ոլորտը կազմող երևույթները։ Երկրորդ անդամը հանդես էր գալիս որպես երկնային զորավար և հովանավորն էր զինվորականության ու ռազմական գործի։ Դիցական եռյակի երրորդ

---

[1] Կ. Մելիք-Օհանջանյան, Միթրա-Միհրի արբանյակներն ու գործակալները («Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք Ա, Երևան, 1946, էջ 269—327)։

[2] Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, «Սասունցի Դավիթ», Երևան, 1961, էջ LI—LIV։

անգամը մարմնավորում էր բերրիությունը և հանդես դալիս առաջին հողագործի ու հողագործության հովանավոր աստծու դերում[3]։

Վերդո, Մհեր, Հովան եղբայրների կերպարներում պահպանվել են նրանց դիցաբանական նախատիպերի ոչ միայն տիեզերական, այլև սոցիալական ֆունկցիաների վերհուշները։ Վերջիններիս բնույթը պարզելու համար դիմենք այս տեսանկյունից մեր վիպական եռյակի զուգահեռներ հանդիսացող և նույնպես ժողովրդական բանահյուսությունից եկող հին իրանական և հին հայկական համապատասխան կերպարներին, որոնց ստեղծման գործում որոշիչ դեր են խաղացել ինչպես աստվածների դասակարգման եռանդամ սիստեմը, այնպես էլ հասարակության եռադաս բաժանման նրան ծնած գաղափարը։

Հայտնի է, որ դասային բաժանման և պետական կառավարման սիստեմները հին Հայաստանում և հին Իրանում սերտ կապի մեջ էին։ Հին իրանական հասարակության մեջ տեսականորեն գոյություն ունեին արտոնյալ երեք դասեր՝ քրմեր, զինվորականներ և հողագործներ[4]։ Սրանց առաջացումը իրանական ավանդությունները կապում էին զրադաշտականության հիմնադիր Զրադաշտի՝ «առաջին քրմի, առաջին զինվորի և առաջին հողագործի» ու նրա երեք որդիների հետ։ Զրադաշտի ավագ որդուց (քուրմ եղբորից) սերված էր համարվում քրմությունը, երկրորդ որդուց (զինվոր եղբորից)՝ զինվորականությունը, երրորդից (հողագործ եղբորից)՝ հողագործ գյուղացիությունը[5]։ Դարերի խորքից եկած այս ավանդական տեսակետը այնքան կենսունակ էր, որ անգամ V դ. պարսից մեծ հազարապետ Միհր-Ներսեհը իր որդիներին կրթել ու դաստիարակել էր նրա հետևությամբ։ Նրանցից մեկին նա պատրաստել էր որպես ապագա քուրմ և օրենսդիր, մյուսին՝ ռազմական վարչության պետ (arateštarān-sālār), երրորդին՝ «հողագործների պետ» (vāstryōšan-sālār)[6]։ Իհարկե, այս տեսական դասակարգումը չէր համապատասխանում V դ. պարսկական իրականության մեջ գոյություն ունեցող դասերին և դասակարգերին։ Սակայն այն դեռևս կիրառվում էր՝ իրեն զգացնել տալով հատկապես կրոնի հետ առնչվող հարցերում։ Այսպես, օրինակ, Իրանի զրադաշտական ատրուշաններից գլխավորներն էին Ֆարնբագը, Գուշնասպը և Բուրզեն Միհրը։ Դրանցից առաջինը քրմական դասի ամենահարգի սրբությունն էր, երկրորդը՝ զինվորականության, երրորդը՝ հողագործների և արհեստավորների համար[7]։

Հին Հնդկաստանում գոյություն ուներ հասարակության բաժանում առանձին ներփակ սոցիալական խմբերի՝ վարնաների։ Ըստ Ռիգվեդայի դրանք առաջացել էին Պուրուշի-արարչի մարմնի տարբեր մասերից։ Բրահմանների (քրմեր) վարնան առաջացել էր նրա բերանից, կշատրիներինը (զինվորներ)՝ ձեռքերից, վայշյաներինը (հողագործներ, արհեստավորներ,

---

[3] G. Dumezil, La prehistoire indo-iranienne des castes. „Journal Asiatique", 1930, t. 216, pp. 114—124; Les dieux des indo-européens, Paris, 1952, p. 5.

[4] Ավեստայի ոտանավորներից մեկում (Ավեստա, Յաշտ, XIX, 7) ասվում է. «Ինչպես ասվեց, նրանք (լեռները) գոյություն ունեն (որպեսզի) ոտնատեղի լինեն քրմերի, զինվորների, հողագործների համար» (H. Bailey. Zoroastrian problems, Oxford, 1943, p. 18)։

[5] W. Geiger, Ostiränische Kultur im Altertum, Erlangen, 1882, S. 483.

[6] Н. В. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII веков, М.—Л., 1946, стр. 207

[7] Ричард Фрай, Наследие Ирана, М., 1972, стр. 325.

առևտրականներ)՝ սրունքներից, շուդրաներինը (իրավազուրկներ)՝ ներբաններից։ Վարնաների քառաստիճան այս սիստեմը (չատուրվարնյա) տարածվում էր նաև երկնային էակների վրա։ Մահաբարատան հնդկական աստվածներին դասակարգում է հետևյալ կերպ. Անգիրասների խմբի աստվածները կազմում էին բրահմանների երկնային վարնան, Ադատյաներինը՝ կշատրիների, Մարուտներինը՝ վայշյաների, իսկ Աշվիններինը՝ շուդրաների[8]։ Վարնաների քառաստիճան սիստեմը ստեղծվել է դասակարգային հասարակության առաջացմանը զուգընթաց, երբ տոհմային ավագանին ամրապնդում էր իր դիրքերը՝ ի հաշիվ նվաճված ցեղերի և ստրկացված համայնականների (հենց սրանցից էր բաղկացած շուդրաների իրավազուրկ վարնան)։ Չատուրվարնյայից առաջ հին հնդկական իրականության մեջ ընդունված է եղել հասարակության եռադաս բաժանումը՝ բրահմաններ, կշատրիներ և վայշյաներ։ Այս առումով ուշագրավ է, որ հնդիկներն այժմ էլ այս երեք վարնաներն համարելով արտոնյալ, նրանց ներկայացուցիչներին կոչում են «կրկնածին» (դվիջա)[9]։

Ինչպես հայտնի է, Խորենացին իր «Հայոց պատմությունը» կերտելիս, գրավոր և դրական մշակման ենթարկված բանավոր աղբյուրներից բացի, ուղղակիորեն օգտվել է նաև ժողովրդական բանահյուսությունից։ Վերջինիս մեջ կարևոր տեղ ունի վիպասանքը։ Խորենացու մշակմամբ (կամ ինչպես ինքն է ասում՝ «ճշմարտմամբ») մեզ է հասել Արտաշես արքայի և նրա երեք որդիների՝ Արտավազդի, Վրույրի և Մաժանի մասին վիպասանքից եկող մի առասպել-ավանդազրույց, որը պետք է ձևավորված համարել մեր նախնիների կողմից ժամանակին կիրառած աստվածների եռանդամ դասակարգման և նրան ծնած հասարակության եռադաս բաժանման սկզբունքի ազդեցության տակ։

Հիշվածների հետ միասին Խորենացին Արտաշեսի որդիների շարքն է դասում նաև Տիրանին (կամ Տիգրանին) ու Զարեհին[10]։ Հ. Մանանդյանը, ելնելով նրա հաղորդումների և օտար ու հայկական ուրիշ աղբյուրների ընձեռած տեղեկությունների համադրումից, պարզել է, որ պատմական Արտաշես Ա-ի (189—160 թթ. մ. թ. ա.) որդիներն են միայն Արտավազդը, Տիրան-Տիգրանը և Զարեհը[11]։ Գ. Սարդսյանն ավելացնում է, որ վիպասանքից են գալիս և առասպելական են Արտավազդը, Վրույրը, Մաժանը։ Արտավազդի առկայությունը Արտաշեսի որդիների թե՛ պատմական և թե՛ առասպելական խմբերում կասկածից վեր է և պետք է հիմք ծառայած լինի Խորենացուն՝ Արտաշեսի որդիների մասին եղած տարբեր տեղեկությունները միավորելու համար[12]։

---

8 Г. А. Кошеленко, Ранние этапы развития культа Мифры («Древний Восток и Античный мир», М., 1972, стр. 82).

9 Н. Р. Гусева, Религиозная обрядность в жизни индусской семьи («Мифология и верования народов Восточной и Южной Азии», М., 1973, стр. 65).

10 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 183—184, 201։

11 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 131—135։

12 Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 162—165։

Խորենացին վիպասանքի հետևությամբ գրում է, թե Արտաշես արքան իր որդի Արտավազդին է տալիս «զիշխանութիւն զօրացն ամենեցուն: Եւ նախանձ բերելով ընդ նմա եղբարցն ի գրգռութենէ կանանց իւրեանց. վասն որոյ կարգէ Արտաշէս զՎրոյր՝ նազարապետ, զայր իմաստուն եւ բանաստեղծ, եւ նաւատայ ի նա զամենայն զործս տանն արքունի. եւ զՄաժան կարգէ քրմապետ ի յԱնի դիցն Արամազդայ: Բաժանէ Արտաշէս եւ զիշխանութիւն զօրուն ընդ չորս. զարեւելեան զօրն թողու ի վերայ Արտաւազդայ, եւ զարեւմտեանն տայ Տիրանայ, զհարաւայինն ի Սմբատ հաւատայ եւ զհիւսիսայինն ի Զարեհ»[13];

Բերված հատվածի ընդգծված մասի աղբյուրը վիպասանքն է, մյուսը իր՝ Խորենացու հավելումը: Այս առթիվ Գ. Սարգսյանը գրում է. «Վերջին հաղորդումը՝ զորքի իշխանությունը չորս մասի բաժանելու և եղբայրներին ու Սմբատին հանձնարարելու մասին առասպելին չի պատկանում թեկուզ այն պատճառով, որ զորքը չորս մասի բաժանելու գաղափարն սկսվում է արծարծվել դեռևս Վաղարշակի գործունեությանը վերաբերող գլուխներում, իսկ այստեղ տեսնում ենք նրա զարգացման սոսկ հերթական փուլը: Ակներևաբար այս դրվագը արհեստականորեն բարդված է Վրույրին ու Մաժանին վերաբերող այն նախորդ դրվագի վրա, որի մեջ նրանք ստանալով մեկը հազարապետություն, մյուսը՝ քրմապետություն, հավասարվում են Արտավազդին, և եղբայրների նախանձը փարատելու խնդիրը լուծվում է»[14];

Արտաշեսի և նրա Մաժան, Արտավազդ, Վրույր որդիների մասին պատմված ավանդազրույցը հայկական զուգահեռն է Զրադաշտի («առաջին քրմի, առաջին զինվորի և առաջին հողագործի») ու նրա երեք որդիների մասին իրանական ավանդազրույցի: Ինչպես տեսանք, համաձայն վերջինիս, իրանական հասարակության երեք դասերը՝ քրմությունը, զինվորականությունը և հողագործների դասակարգը սերում էին այս երեք եղբայրներից. քուրմ եղբորից՝ քրմությունը, զինվորից՝ զինվորականությունը, հողագործից՝ հողագործ գյուղացիությունը: Ըստ այսմ, Արտաշեսի երեք որդիները Հայաստանում, ինչպես Զրադաշտինը Իրանում, համարվելու էին. առաջինը քրմապետ (և քրմական դասի հիմնադիր), երկրորդը՝ զորավար (և զինվորական դասի հիմնադիր), երրորդը՝ հազարապետ (և հողագործ գյուղացիության դասակարգի հիմնադիր): Վերջին դեպքում պետք է հաշվի առնել, որ հին Հայաստանում հազարապետի իրավասությանն էին ենթակա երկրի բոլոր գյուղական համայնքները, նա էր միաժամանակ տնօրինում ֆինանսների, հարկահանության և հանրային աշխատանքների հետ կապված հարցերը[15]: Իրանում հարկահանության գործը հանձնարարված էր վաստրյոշան-սալարին, որի պաշտոնի «հողագործների պետ» անվանումը պերճախոս վկայությունն է երկրի գյուղական բնակչության նկատմամբ նրա նախապես ունեցած այնպիսի դիրքի, ինչպիսին վաղ միջնադարյան Հայաստանում ուներ հազարապետը[16]:

Մաժան, Արտավազդ, Վրույր եղբայրների կերպարներում պահպանված են դրանց նախատիպերի ոչ միայն սոցիալական ֆունկցիաների վերհուշնե-

---

13 Մովսես Խորենացի, էջ 183—184 (ընդգծումը մերն է—Ս. Պ.):

14 Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 162—163:

15 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 831:

16 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 446.

ը, այլև դիցաբանական գծերը։ Նրանցից ավագը՝ Մաժանը, պահել է իր դիցաբանական նախատիպի թե՛ անունը (այսպես էր կոչվում նաև փոքրասիական աստվածներից մեկը), և թե՛ ամպրոպային հատկանիշները՝ հատկապես ակնառու վիշապազունների հայր Արգավանի հետ ունեցած հակամարտության դրվագում[17]։ Եղբայրներից երկրորդի՝ Արտավազդի, կերպարը բարձրանում է լույս-արևի աստված Միհրի հայկական տարբերակի վրա, ուստի և նրա շուրջ հյուսված առասպելներն ու ավանդազրույցները ներկայացնում են Միհր աստծու մասին եղած դրանց զուգահեռները[18]։ Ինչ վերաբերում է եղբայրներից կրտսերին՝ Վրույրին, ապա Խորենացու երկում միայն մեկ անգամ, հարևանցիորեն հիշվելու պատճառով[19] նա ի հայտ չի բերում վիպասանքում ունեցած իր դիցաբանական գծերը։ Այսուհանդերձ, Վրույրի հազարապետի պաշտոնը հողագործների դասակարգի հետ ունեցած առնչությամբ հուշում է, որ նրա դիցաբանական նախատիպը եղել է հեթանոս հայերի հողագործության հովանավոր աստվածը։

Սասունցի եղբայրների սոցիալական ֆունկցիաները պարզաբանելու համար, նախ տեսնենք, թե ինչ հարաբերության մեջ են մի կողմից Մհեր, Հովան, Վերգո, մյուս կողմից՝ Արտավազդ, Վրույր, Մաժան եռյակները։ Մհեր-Արտավազդ զուգահեռ կերպարները բարձրանում են միևնույն դիցաբանական հիմքի վրա։ Ինչպես ասվեց, դա Միհր (Միթրա) աստվածն է։ Վաղուց են ուշադրության արժանացել նաև Միհր-Մհերի և Արտավազդի առասպելների ընդհանրությունները (հատկապես նրանց բնավորությունների երկվությունը, քարայրում փակվելը, երկրորդ գալստի ակնկալիքը)[20]։ Վիպասանքում Արտավազդը հանդես է գալիս որպես զորավար, մի դեր, որ սասունցի եղբայրներից ստանձնել է Մհերը։ Հիշենք նաև նրա դիցաբանական նախատիպ Միհր-Միթրայի և վերջինիս արևմտյան տարբերակ «Անպարտելի արևի» (Sol Invictus) ռազմական գծերը[21]։

Զուգահեռ կերպարներ են նաև Հովանն ու Վրույրը։ Հովանը Սասնա գանձարանի և հարկահավաքման գործի հսկիչի դերով մոտենում է հազարապետ Վրույրին, որի գործակալությունն էր տնօրինում երկրի ֆինանսների և հարկահանության հետ կապված հարցերը։ Բացի դրանից, Խորենացին՝ վիպասանքի հետևությամբ, Վրույրին բնութագրում է «իմաստուն և բանաստեղծ» բառերով, իսկ այդպիսի գծերով «Սասնա Ծռերում» օժտված է ամենից առաջ Հովանի կերպարը։

Որոշակի ընդհանրություններ են ի հայտ բերում նաև Վերգոյի և Մաժանի կերպարները։ Մաժանը քրմապետ էր, ուստի և նա էր լինելու եղբայրնե-

---

17 Մովսես Խորենացի, էջ 180, 201—202; Гр. Капанцян, Историко-лингвистические работы, Ереван, 1956, стр. 282—290. Ս. Պետրոսյան, Մաժան-Արտավան հակամարտության մասին («Սովետական գրականություն», 1971, № 9, էջ 119—120)։

18 Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 36—41։

19 Մովսես Խորենացի, էջ 183—184։

20 Մ. Արեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 148—151, 426, Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 58—65։

21 В. Миллер, Очерки арийской мифологии в связи с древнейшей культурой, т. I, М., 1876, стр. 75.

րից ավագը (հիշենք Զրադաշտի և Միհր-Ներսեհի որդիներին), իսկ Սասնա Ծռերի երկրորդ սերնդի մեջ ավագը Վերդոն էր։ Չնայած Վերգոյի մասին որպես քրմապետի էպոսում ուղղակի վկայություններ չկան (նրա կերպարն ընդհանրապես աղճատված է կամ մթագնված՝ գտնվելով դուրսմղման վիճակում), բայց էպոսի պատումներից մի քանիսում նա ուղղակիորեն թագավոր է հորջորջվում[22]։ Իսկ հայտնի է, որ դասակարգային հասարակության և պետության առաջացման ժամանակաշրջանում գոյություն ուներ քրմապետի և արքայի ֆունկցիաների միակցություն (հայ իրականության մեջ այս երևույթը գոյատևում էր անդամ մ. թ. I դ.)[23]։ Այս հանգամանքը դրդում է Վերգոյի çəran մականվան մեջ տեսնելու նրա սոցիալական վիճակի (որպես արքա-քրմապետի) և ոչ թե տիեզերական էության արտահայտությունը։

Աստվածաշնչից հայտնի է փղշտական թագավորների պելազգա-փղշտական ծագմամբ sərān տիտղոսը, որը բուլղար գիտնական Վ. Գեորգիևը բխեցնում է հնդեվրոպական նախալեզվի. k'er-, k'erə-, k'ra- («վերնամաս, գագաթ, գլուխ, եղջյուր») արմատից՝ այն կապելով մի կողմից խեթերեն ḫarsan «գլուխ», մյուս կողմից՝ հունարեն κάραvος «գլխավոր, պետ» նույնածագում բառերի հետ[24]։ Գ. Ջահուկյանը սրանց է կցում նաև Հայասայի թագավորներից մեկի՝ Կաբանի (karan-ni) անունը, որն, ըստ նրա, կարող էր լինել այն կրողի ոչ թե անձնանունը, այլ տիտղոսը[25]։ Թվարկված տերմին-տիտղոսների հին հայկական զուգահեռն է ներկայացնելու Վերգոյի çəran մականուն-տիտղոսը՝ հետագայում նոր մեկնաբանում ստացած իր նախնական իմաստի մթագնման պատճառով[26]։ Cəran մականվան այսպիսի ստուգաբանության հավանականության օգտին է խոսում և այն, որ ժամանակին Սասունը մասն էր կազմում Արմե-Շուպրիա երկրի, իսկ սա Հայկական լեռնաշխարհի տարածքում հայերենակիր ցեղերի (հայերի լեզվական նախնիների) առաջին պետական կազմավորումներից մեկն էր։

Այսպիսով, Սասնա ծռերի երկրորդ սերնդի ներկայացուցիչները սոցիալական որոշակի ֆունկցիաներով օժտված տիեզերական էակների կերպարների բանահյուսական-էպոսային զարգացման արդյունք են։ Ընդ որում, նրանց կերպարներում տիեզերական գծերն առավել ցայտուն են դրսևորվում, քան Արտաշեսի կամ Զրադաշտի որդիների կերպարներում (այստեղ առաջին պլան է մղված սոցիալականը և մթագնված՝ տիեզերականը)։ Այսուհանդերձ, վերջիններիս նման Մհեր, Հովան, Վերգո եղբայրների կերպարները ևս պա-

---

22 «Սասնա Ծռեր», հ. Բ, մասն Ա, Երևան, 1944, էջ 20, 65։

23 К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, стр. 62—63.

24 В. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр. 103.

25 Г. Б. Джаукян, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, стр. 41—42.

26 Այսպիսով, հնդեվրոպական կենտում տիպի լեզուներում ունենք միևնույն արմատից ծագած խեթերեն ḫarsan, հունարեն κάραvος բառերը և հայասական karanni տիտղոսը, իսկ ազգակից սատեմ տիպի լեզուներում՝ պելազգա-փղշտական sərān և հայերեն çəran տիտղոսները։ K'erə-s-n>çəran անցման համար հմմտ. k'er-s-> ցռուկ, երբ հնդեվր. k'> հայ. ց, իսկ հնդեվր. -rs-> հայ. -ռ- անցումը ընդհանրական է (Գ. Ջաուկյան, նշվ. աշխ., էջ 180)։

հել են իրենց նախատիպերի սոցիալական ֆունկցիաների վերհուշները։ Նրանցից առաջինի և երկրորդի մեջ հստակորեն երևում են զորավարն ու տնտես-հաղարապետը, իսկ երրորդի մեջ՝ չնայած աղոտ, այնուամենայնիվ, ուրվագծվում է նախքին արքա-քրմապետը։

Արտաշեսի երեք որդիների և սասունցի երեք եղբայրների մասին ասվածները թույլ են տալիս եզրակացնելու, որ հին Իրանի և Հնդկաստանի նման հին Հայաստանում ևս ժամանակին կիրառություն է ունեցել աստվածների եռանդամ դասակարգման սկզբունքը։ Ինչպես նշված երկրներում էր, հին Հայաստանում ևս այն լինելու էր հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանից եկող ժառանգություն՝ կապված հնդեվրոպական նախաժողովուրդ-ցեղախմբի մեջ ընդունված հասարակության եռադաս (քրմեր, զինվորներ, հողագործներ կամ շարքային համայնականներ) բաժանման հետ։

ТРИ БРАТА ИЗ ЭПОСА «ДАВИД САСУНСКИЙ» И ИХ ВИПАСАНКСКИЕ ПАРАЛЛЕЛИ

С. Г. ПЕТРОСЯН

Резюме

Второе поколение сасунских богатырей — братья Верго, Мгер и Ован в армянском эпосе наделены не только космическими, но и социальными функциями. Аналогичные образы можно найти в древнеармянском фольклоре (а именно, в випасанке). Это — трое легендарных сыновей царя Арташеса: Мажан, Артавазд и Вруйр.

Как доказано французским ученым Жоржем Дюмезилем, идеология трехчленной классификации богов лежит в основе религиозных верований всех индоевропейских народов, являясь наследием времен индоевропейской общности и отражая принцип трехчастного деления (жрецы, воины, земледельцы или рядовые общинники) протоиндоевропейского общества.

Сопоставление образов трех братьев из эпоса «Давид Сасунский» и трех легендарных сыновей царя Арташеса (Верго—Мажан, Мгер—Артавазд, Ован—Вруйр) приводит к заключению, что подобно древнему Ирану и древней Индии в Армении также был принят принцип трехчастного деления общества и вытекавшая из него трехчленная классификация богов. В недрах этой общеиндоевропейской идеологии и зарождались как прототипы образов трех сыновей Зороастры («первого жреца, первого воина, первого земледельца») из известной иранской легенды, так и прототипы образов трех сыновей царя Арташеса из випасанка и параллельных образов братьев-богатырей из эпоса «Давид Сасунский».